ՄԵԹՈԴԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄ

Թեմա՝ Ժամանակակից դասավանդման մեթոդներ.դերային խաղ

Զեկուցող՝ Ա.Ճաղարյան

2021թ.

Դերային խաղ

Դերային խաղն ուսման և հոգեբանության մեջ կիրառվող մեթոդ է: Կրթական ծրագրերում, օրինակ, դասախոսը ուսանողներին կարող է անսպասելի իրավիճակներ առաջարկել, ուր ուսանողներին անհրաժեշտ է ընդունել որևէ դեր կամ տեսակետ, այնուհետև՝ փորձեր անել դա հասունացնելու և ավարտելու: Այն ուսանողները, ովքեր չեն մասնակցում բուն դերային խաղին, ստանձնում են դիտորդի դերը և խաղի ավարտից հետո եզրակացություններ անում: Դերային խաղն արդյունավետ իրականացնելու նախապայմանը առաջարկվող դերային իրավիճակի՝ իրականությանը հնարավորինս մոտ լինելու մեջ է: Դասախոսը մանրամասն ներկայացնում է իրավիճակի բոլոր կողմերը: Խաղը հաճախ կառուցվում է պոտենցիալ կոնֆլիկտների շուրջ: Այն օգտակար է, երբ փորձ է արվում ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ կարող են տարբեր կարծիքներ ունենալ: Մեթոդի արդյունավետությունն այն է, որ

- մեր ձեռք բերած փորձը պահպանվում է երկար,
- այն գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման հետաքրքիր ձև է,
- այն հնարավորություն է տալիս ուսանողներին հիմնախնդիրների իրավիճակային դրսևորումները հասկանալ,

Դերային խաղի բուն ընթացքից հետո իրականացվում է դեբրիֆինգ, որի ժամանակ մեր դասախոսը

- հանում է մեզ դերերից,
- հստակեցնում է մեզ հետ կատարվածը,
- քննարկում է մեր սխալները,
- բացահայտում է մեր դիրքորոշումները, զգացմունքները, փոփոխությունները, որոնք առկա էին բուն դերային խաղի ընթացքում,
- մեզ ինքնադիտարկման հնարավորություն է տալիս,
- համադրում է մեր դերային խաղի արդյունքները մեր առաջնային նպատակների հետ,
- մեր վարքի վերաբերյալ վերլուծություններ է իրականացնում,
- առաջադրում է մտածելու նոր թեմաներ,
- կապում է դերային խաղը մեր կողմից հասկանալի տեսական նյութերի հետ:

Դերային խաղը հաճախ կիրառում ենք, երբ անհրաժեշտ է զարգացնել մեր՝ միջանձնային հարաբերությունների հմտությունները